

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

20.07.2020թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին**

- Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մխիթարյանը - մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Վ.Խաչատրյանը - մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Վ.Ղարսայանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Հովհաննիսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Կ.Ադամյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Հ.Այվազյանը - մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյանը - մարզպետի օգնական
- Ն.Հովհաննիսյանը - մարզպետի օգնական
- Ռ.Մարգարյանը - փորձագետ

**Օրակարգում՝**

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

**Հանձնարարվեց**

**1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին և քաղաքաշինության վարչության պետի ժ/պ Վ.Ղարսայանին՝**

Ներկայացնել տեղեկատվություն Վանաձոր համայնքի Լազյան փողոցի ապօրինի շինության ընթացքի վերաբերյալ:

**2. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝**

ա. Մարզպետի կողմից իրականացվող շրջայցերի ընթացքում տրված հանձնարարականների վերաբերյալ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել գրավոր տեղեկատվություն:

բ. Ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ամենամյա արձակուրդների տրամադրումը հնարավորինս իրականացնել ըստ սահմանված գրաֆիկի և ժամկետներով:

**3. ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Մխիթարյանին և քաղաքաշինության վարչության պետի ժ/պ Վ.Ղարսայանին՝**

Համատեղ ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ մարզում ճանապարհների սպասարկման աշխատանքների հետևանքով առաջացած տնտեսվող գումարների օգտագործման վերաբերյալ:

**4. ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի Ժ/պ Ժ.Ղազարյանին և իրավաբանական բաժնի պետ Ա.Սահակյանին՝**

Առաջարկություններ ներկայացնել Վանաձոր համայնքի ղեկավարին և իրավական հիմնավորմամբ ողջամիտ ժամկետներ առաջարկել համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների՝ օրենսդրության խախտմամբ պաշտոնավարող տնօրենների աշխատանքային հետագա գործունեության վերաբերյալ:

**5. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ.Ասլանյանին՝**

Համապատասխան գրությամբ դիմել և համայնքների ղեկավարներից պահանջել ներկայացնելու բնակապահովման ծրագրից օգտված և պետության կողմից իրենց նկատմամբ պարտավորությունները մարված շահառուների ցուցակները:

**6. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝**

Երկշաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն մարզի համայնքների կողմից օգտագործվող հողատարածքների և ցանքատարածությունների վերաբերյալ:

**7. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝**

ա.Մեկշաբաթյա ժամկետում հավաքագրել և ներկայացնել մարզի համայնքներում գործող ընդերքօգտագործողների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը (պայմանագիր, պայմանագրային գին, վարձավճարի մուծման վերաբերյալ տեղեկատվություն և այլն):

բ.Մարզպետի կողմից տրված հանձնարարականների վերաբերյալ սահմանված ժամկետներում պարբերաբար գրավոր ներկայացնել տեղեկատվություն:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ